բունակելու և թատրոնը պահելու համար կազմվել է մի ընկերակցութիւն ռուս դերասանական խմբի և օրկէստրի մէջ։ Այդ ընկերակցութիւնը իր կողմից թատրոնը վարձով է տալիս ցանկացողներին։ Ասում են որ պ. Պալմ մի քանի ամսվայ ռոճիկ պարտ էր մնացել օրկէստրին, դերասաններին, թատրոնի մէջ ծառայողներին, բանուորներին, մեքենապետին, գազով լուսաւորողին, վերջապէս ամենքին։ Այժմ, ինչպէս մեզ պատմում են, օրկէստրը և ռուս դերասանները, որոնք յանձն առան թատրոնը պահելու, նիւթական մեծ վնասներ կրած լինելով, պահանջում են, ի հարկէ, որ և հայ թատրոնական խումբը, որ խաղում է նոյն թատրոնում շաբաթ երկու անգամ, նոյնպէս բաժանի ընդհանուր վնասները և իրաքանչիւր ներկայացման համար նորից վճարի թատրոնի և օրկէստրի վարձը, չը նայելով որ հայ թատրոնական կոմիտէտը արդէն կանխիկ վճարած էր Պալմին ամբողջ սեզոնի համար բաւական մեծ գումար։

—

Մեզ պատմում են որ պ. Ստեփան Սաֆրազեանց կազմել է Թիֆլիսում հայ թատրոնասէրների մի խումբ և հոկտեմբերի 10-ին ուղևորվել է դէպի գաւառական քաղաքները. Կովկասի այլ և այլ հայաբնակ քաղաքներում հայերէն ներկայացումներ տալու համար։

—

Քանի մի օր է եղանակը Թիֆլիսում սկսում է փոխվել և դառնում է կատարելապէս աշնանային։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են որ հոկտեմբերի 10-ին գանձակեցի հարուստ Նարաթեան եղբայրներից կառուցվող շինութեան մօտ, արքունի ճանապարհից ոչ ձեռու, սարի ստորոտում, նոյն իսկ շինութեան նեղի բակի համար սարի բաժինը կտրելու ժամանակ յանկարծ անագին քառաժայրը փուլ է գալիս և երեք հոգի մշակները տակն են մնում։ Երկուսին հազիւ ազատում են, իսկ երրորդի միայն դիակն են հանում փլված քարերի տակից։

—

Ռուս «Ти҂рл. Объявленія» լրագիրը լսել է որ առաջիկայ ձմեռվայ համար գալիս է Թիֆլիս ռուս օպէրայի մի խումբ պ. Պավլովսկու և տիկին Պավլովսկու մասնակցութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

—

Վիէննայի „Journal d'Orient“ լրագիրը շարունակում է տպագրել յօդուածներ Հայոց խնդրի մասին։ Լրագրի № 41 լի է այդ տեսակ յօդուածներով։ Առաջնորդող յօդուածը համեմատում է Հայաստանի այժմեան դրութիւնը Բոլղարիայի դրութեան հետ 1877 թ-ին։ Այն ժամանակ, ինչպէս ասված է Բերլինի կոնգրէսի արձանագրութիւնների մէջ 1878 թ-ին, պատերազմը հետևանք էր Փարիզի դաշնագրի մէջ հաստատված պայմանների անընդհատ բռնաբարութեան թիւրքաց կառավարութեան կողմից։ Ռուսաստանը երկար ժամանակ չէզոք մնաց, բայց վերջը միջամտեց Բոլղարիայի անտանելի դրութեան մէջ։

Այսօր այն պարտաւորութիւնները որ Բ. Դուռը յանձն առաւ Հայաստանի վերաբերութեամբ Սան-Ստեֆանոյի դաշնագրի զօրութեամբ և յետոյ, 1878 թ-ին, Բերլինի կոնգրէսում, անդադար խախտվում են։ Դրութիւնը նոյն է և Ռուսաստանը չէ կարող անտարբեր աչքով նայել թիւրքաց Հայաստանի այդ դրութեան վրա, մանաւանդ, աւելացնում է Ֆրանսիական թերթի յօդուածագիրը, որ այնտեղ Ռուսաստանը աւելի մեծ շահեր ունի քան թէ 1877 թ-ին Բոլղարիայում։

Յօդուածագիրը, որին խմբագրութիւնը անուանում է Եւրոպայում մեծ հեղինակութիւն ունեցող մի պետական անձնաւորութիւն, խորհուրդ է տալիս որ Ռուսաստանը պահանջի թիւրքաց Հայաստանը որպէս զրաւ այդ երկրում մոցնվելի բէֆորմները իրագործելու, այսինքն Բերլինի մէջ Բ. Դրան յանձն առած պարտաւորութիւնները կատարելու համար։ Յօդուածագիրը աւելացնում է որ ժամանակաւորապէս զրաւել մի երկիր չէ նշանակում նուաճել այդ երկիրը։

Մի և նոյն ժամանակ յօդուածագիրը յիշեցնում է որ Բերլինի դաշնագրի մէջ ասված է որ պատերազմական ծախսերը չեն կարող վճարված լինել երկրի ձևով։

Վիէննայի լրագրի խմբագրութիւնը աւելացնում է որ իր կարծիքով Հայոց խնդրի լուծելու հոգացողութիւնը պէտք է յանձնված լինի, Բերլինի դաշնագրի զօրութեամբ, ամբողջ Եւրոպային, Եւրոպական պետութիւնների միացած համաձայնութեանը, և ոչ թէ միմիայն մի պետութեանը։

Լրագրի մի և նոյն համարում տպված են դօկումենտներ, որոնք պարունակում են ճիշդ տեղեկութիւններ Հայաստանում գործված հարստահարութիւնների մասին։

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի նոյն համարում քաղված է մի լուր Կ. Պոլսի „Phare du Bosphore“ լրագրից, որ հաղորդում է թէ թիւրքաց կառավարութիւնը արգելել է Կ. Պոլսի բոլոր լրագիրներին մի խօսք անգամ արտասանել Հայոց խնդրի մասին։ Անհնազանդ լրագիրը անմիջապէս կը խափանվի։

ԱՆԳԼԻԱ

—

Լիդսի մէջ տուած բանկետի ժամանակ Գլադստօն արտասանեց մօտաւորապէս հետևեալ ճառը, որ գլխաւորապէս վերաբերվում է արտաքին քաղաքականութեանը։ Այդ ճառը անդադար ընդհատվում էր ծափահարութիւններով և հաւանութեան նշաններով։ Սկզբից խօսելով Իրլանդիայի մէջ մոցրած ստիպողական օրէնքների մասին, առաջին մինիստրը ասաց. «Ստիպողական ձևը երբէք մեզ հաճելի չէ եղել, նրա գործադրութեան պատճառը ցաւալի անհրաժեշտութիւնն է եղել։ Պարլամենտը պարտական էր հաւանութիւն տալ այդ միջոցին, ինչպէս և կառավարութիւնը պարտաւոր էր գործադրել իրանից կախված բոլոր միջոցները քաղաքացիների կեանքի և անձնական իրաւունքների ապահովութեան համար։ Մեզ մեղադրում են, որ չը կարողացանք փոքրացնել պետական ծախսերը։ Դա ճշմարիտ է։ Մենք չը կարողացանք այդ բանն անել մեզ թողած ժառանգութեան պատճառով։ Յայտնի է, որ վատնումները ոչ թէ միայն շատ ծախսում են, այլ և գանազան պարտականութիւններ են ընդունում։ Մենք պէտք է ուրախ լինենք, որ հարկաւորութիւն չունենք պարլամենտից միլիոններ պահանջել անցեալ դժուարութիւններից ազատվելու և կատարելու համար այն պարտականութիւնները, որոնց կտակել են մեզ մեր նախորդները։ Վերջին ընտրութիւններից առաջ անգլիական ժողովուրդը ուշադրութեամբ քննեց նախորդ կառավարութեան քաղաքականութիւնը և նրանից ծագող դժուարութիւնները։ Բերլինի դաշնագիրը արևելեան ժողովուրդների համար բարեբեր յօդուածներ էր բովանդակում, չը նայելով, որ Անգլիայի աշխատանքների շնորհիւ նրանք բաւական սահմանափակված էին։ Ներնօգորիական քաջ ժողովրդին խոստացված էր նրա երկրի ընդարձակումը, բայց, երբ կառավարութիւնը մեր ձեռքն անցաւ, այդ խոստումը իրագործելու համար դեռ ոչինչ կատարված չէր։ Մենք վճռեցինք Եւրոպայի օգնութեամբ կատարել այդ խոստումը և, 400 տարի իր իրաւունքները պաշտպանելու համար պատերազմող քաջ ժողովուրդը, որ արդէն յոյսը կորցնում էր, թէ իր իրաւունքները երբ և իցէ կը

չը կար, երբ ամենայն միջոցներ բաց են եղել Միրզոևի առաջ բոլոր նաւթային հանքերը հարստահարելու։ Մի խօսքով նա է եղել միակ տէր և թագաւոր բոլոր հանքերի, նոյնպէս նա է շինել առաջին ֆոտոգէնա-գործարանը Բագուի ամենալաւ տեղում։ Բայց նայեցէք այժմ, թէ մինչև օրս նա ինչ է առաջացրել, այսինքն որքան յառաջադիմութիւն է արել նաւթային արդիւնաբերութեան մէջ։ Հաւասարացրէք նրան Նոբելի հետ, որը առ նուազն քսան տարի նրանից յետոյ է սկսել պարապել նաւթային գործերով և դուք մի սարսափելի զանազանութիւն կը գտնէք։

Տեսէք վերջինը ինչ հսկայական քայլեր է արել այդ, համեմատաբար, շատ կարճ ժամանակամիջոցում։

Դեռ 1876 թուականին նա, հանքերից մինչև գործարանները (13 վերստ հեռաւորութիւն է) նաւթ կրող սայլապանների հարստահարութեան առաջ կապելու համար, շինել է տուել առաջին նաւթախողովակը (нефтепроводъ), որի միջոցով նա համեմատաբար շնչին ծախսով մինչև օրս հասցնում է նաւթը թէ իր և թէ ուրիշների գործարանները։ Վերջիններից նա առնում է ամենայն մի պուդից, բալախանիից մինչև գործարանները բերելու համար, երկուսից մինչև երեք ու կէս կոպէկ, նայելով հանգամանքներին։ Բայց վերջերում Նոբելը տեսնելով, որ մէկ նաւթախողովակ բաւականութիւն չէ անում, աւելացրեց երկրորդը, իսկ այժմ այդ երկուսի փոխարէն դրել է մի ընդարձակը, որը օրական 75—80,000 պուդ նաւթ է տեղափոխում գործարանները։ Յարմարացնելով սև նաւթի ճանապարհը, Նոբելը հետզհետէ սկսեց աշխատել պատրաստի ֆոտոգէնը Ռուսաստան տեղափոխելու համար նպատակայարմար միջոցներ գտնել։ Այդ ևս աջողվեց նրան։ Այժմ Նոբելը ունի մեծ քանակութեամբ հեղալից չոգենաւեր (наливные параходы) որոնցով նա ֆոտոգէնը տանում է մինչև Վոլգա գետը առանց տակառների, որոնք շատ թանգ են նստում ուրիշ ճանապարհողներին։ Երբ ծովային հեղալից չոգենաւերը հասնում են այդպէս անուանված լինը կանգունը (9-ти футъ) ուր ծովը գետից բաժանվում է, ֆոտոգէնը ծովային չոգենաւերից դատարկվում է նոյնպէս հեղալից գետնային չոգենաւերը, որոնք այստեղից ուղղակի հասցնում են ֆոտոգէնը գետեղրեայ զանազան քաղաքներ, մեծ մասամբ Ցարիցին։ Վերջինում Նոբէլը շինել տուած ունի անագին երկաթեայ բէղերվուարներ, որոնք լրացվում են ֆոտոգէնով նաւերից չոգեշարժ նասոսներով։ Այդ բէղերվուարներից ֆոտոգէնը զանազան կողմեր ցրվելու համար Նոբէլը պատրաստի ունի թւով մի քանի հարիւր նոյնպէս նալիվնոյ վագոններ երկաթուղիների վրա, որոնք շինված են մասնաւորապէս ֆոտոգէնի համար։ Նալիվնոյ վագոնները ֆոտոգէնը հասցնում են Ռուսաստանի զանազան կենտրոնական քաղաքներ, ինչպէս՝ Տամբով, Կիև, Օդէսսա, որտեղ պատրաստ կան վերոյիշեալ բէղերվուարներից։ Այստեղից արդէն ֆոտոգէնը ցրվում է Ռուսաստանի խոր անկիւններով մինչև Պետերբուրգ և Աւստրիայի Բրիգա քաղաքը։ Ասում են թէ Նոբէլը միայն Ռուսաստանով չէ բաւականանում և կամենում է Գերմանիա և արտասահմանի ուրիշ կողմերը ևս ճանապարհել ֆոտոգէնը, մինչդեռ մնացեալ գործատերերը ֆոտոգէնը կարողանում են հասցնել Ռուսաստանի միայն մի քանի մօտ քաղաքներ, այն է՝ Աստրախան, Ցարիցին, Ղազան, Սարատով, Կիև, Սիմբիրսկ, Նիժնի-Նովգորոդ մինչև Մոսկվա և ոչ հեռու այն ևս, ի հարկէ, տակառներով։ Միայն Նիժնի-Նովգորոդում չունի Նոբէլը բէղերվուարներ, երբ այստեղ ևս կունենայ, որ ինչպէս հաւատացնում են, այժմեանից մտադիր է, այնուհետև էլ տակառներով տանողներին կը տայ վերջնական հարուած։

Մօտաւորապէս չորս թէ հինգ տարի է անց, որ Նոբէլը ֆոտոգէնը տակառներում ուղարկելուն վերջ է տուել։ Ֆոտոգէնը տակառներում տանելը բազմակողմանի անյարմարութիւններ ունի։

Առաջին, որ նա համեմատաբար շատ թանգ է նստում քան թէ Նոբէլի սիստեմայով տանելը, այն է հեղալից նաւերով, հետևեալ պատճառներով։ 1) ճանապարհողը բացի միայն իստակ ֆոտոգէնի քաշի (нетто) համար ճանապարհածախս (фрахтъ) վճարելու, վճարում է և տակառների քաշի (тара) համար, 2) որ իրանք տակառները մեծ գումարով են գնվում։ Մի տակառը, որ տեղաւորում է իր մէջ 19—20 պուդ և աւել, եթէ վեր առնենք այժմեան գինը, արժէ տասն ու երկու բուբլի, ուրեմն եթէ քսան պուդ ֆոտոգէնի վրա ընկնում է 12 բ. աւելորդ ծախս, կը նշանակէ ամենայն մէկ պուդի վրա ընկնում է 60 կոպէկ։ Հաշվենք և տակառի համար վճարվող ֆրախտը դիցուք մինչև Ցարիցին, որ մի պուդի համար 24 կոպէկ է վճարվում։ Եթէ ամենայն մի տակառի քաշը միջին թւով հաշվենք 3 պ. 20 ֆ., որից երբէք պակաս չէ լինում, և այդ թիւը բազմապատկելով 24 կոպէկի վրա կը ստանանք 84 կ. միայն տակառի ճանապարհածախս, որ աւելացնում է ամենայն մէկ պուդ ֆոտոգէնի ֆրախտը մօտաւորապէս $4^1/_5$ կոպէկով։ Այդ երկու աւելորդ, այն է $64^1/_5$ կոպ. ծախսից որ առաջ է գալիս տակառներ գնելուց և նրանց համար ճանապարհածախս վճարելուց, ի հարկէ, ազատ է Նոբէլի սիստեմայի։

Երկրորդ, որ տակառների մէջ տանելու ժամանակ, նա մանաւանդ ամառը, տաքի զօրութենից, նրանց միջից դուրս է հոսում ֆոտոգէնի մեծ քանակութիւն։ Այս տարի ֆոտոգէնի կաթումն (течь) համեմատաբար շատ սաստիկ է եղել տակառների վատութեան պատճառով, այնքան սաստիկ, որ չոգենաւերից մէկում, ինչպէս ես տեսայ իմ աչքով, մի ֆուտ խորութեամբ ֆոտոգէն էր մնացել տակառների միջից հոսած։

Սակայն միայն սրանով չէ գերազանցում Նոբէլը մնացեալ գործարանատէրերից։ Նրա ֆիրմը այնքան հեղինակութիւն է ստացել Ռուսաստանում, որ նրա ֆոտոգէնը միշտ 10—15 կոպէկով ուրիշներից թանգ է ծախվում։ Այստեղ դեր է խաղում ի հարկէ ֆոտոգէնի յատկութիւնը, որը հեղալից նաւերով տանելու ժամանակ չէ փոխանում, մինչդեռ տակառներով տանելիս ֆոտոգէնի գոյնը բնականից երկուապատիկ մթնում է։ Բացի վերջինից նոյն իսկ գործարանում Նոբէլը ֆոտոգէնը շատ զգուշութեամբ է պատրաստել տալիս, տէօրիապէս զարգացած և գործնականապէս հմուտ քիմիկոսների ձեռքով։ Դեռ մինչև օրս գրեթէ բոլոր երկրորդական գործարաններում քիմիկոսների դերը կատարում են զանազան տգէտ գործակատարներ, և մինչև անգամ հասարակ բանուորներ, որոնք ի հարկէ շատ քիչ կամ միանգամայն հասկացողութիւն չունեն իրանց կատարած գործի մէջ։ Ցիրաւի սրանից մի քանի տարի առաջ Ռուսաստանում գնողները ուշադրութիւն չէին դարձնում ֆոտոգէնի յատկութեան վրա, նրանք գլխաւորապէս գներին էին նայում և ով էժան էր ծախում ի հարկէ նրանից էին առնում։ Բայց այժմ այդպէս չէ. գնողների ամենաառաջին պահանջներն են ֆոտոգէնի իստակութիւնը և անվտանգաւորութիւնը։ Վերջինը կախված է նրանից թէ ֆոտոգէնը տաքութեան քանի աստիճաններում կարող է բոցավառվել։ Ֆոտոգէնի այդ յատկութիւնը, այն է բոցավառութեան աստիճանը (градусъ воспламеняемости) մեծ դեր է խաղում այժմ, մինչդեռ նա առաջ գրեթէ ոչինչ նշանակութիւն չունէր գնողների համար։ Ամերիկայում օրէնքը անգամ արգելում է նաւթային գործարանատէրերին պատրաստել այն տեսակ ֆոտոգէն, որի բոցավառութեան աստիճանները 40-ից պակաս կը համարվեն։ Սակայն Բագուի ֆոտոգէնը անցեալ տարիները Մոսկվայի տեխնիքական ուսումնարանի լաբորատորիայում ենթարկվելով փորձի, գտել են, որ նա շատ վտանգաւոր է, քանի որ նրա բոցավառութեան աստիճանները քսանից չեն բարձրանում, մի քանի յայտնի գործարաններինը մինչև անգամ 10—15-ից ոչ աւել, ինչպէս պ. Սարգիսեանի ֆոտոգէնինը 11% են եղել։ Նոբէլը այդ հանգամանքը նոյնպէս անուշադիր չէ թողել. նրա ֆոտոգէնը այժմ ազատօրէն կարող է մրցել այդ կողմից ամերիկացիների ֆոտոգէնի հետ։ Ֆոտոգէնը վտանգաւոր դարձնող, այսինքն նրա բոցավառութեան աստիճանները պակասցնողը այդպէս անուանված գազալինն է. որը ուրիշ ոչինչ է եթէ ոչ ֆոտոգէնի առաջին կաթիները. այսինքն նրա ամենաթեթև մասը։ Նոբէլը ֆոտոգէնի այս մասը անխնայ կերպով այրում է և չէ խառնում, մինչդեռ ուրիշ գործարանատէրերը նրան թողնում են ֆոտոգէնի մէջ միայն այն պատճառով, որ նա վերջինի տեսակարար ծանրութիւնը (удѣльный вѣсъ) պակասցնում է, որին մանր գործարանատէրերը մեծ նշանակութիւն են տալի քան թէ անվտանգաւորութեան։ Բայց Նոբէլի ֆոտոգէնը այդ երկու գլխաւոր յատկութիւնները միահաւասար պահում է, այսինքն բոցավառութեան անվտանգ աստիճանները տեսակարար ծանրութեան համեմատաբար պակասութեան հետ։

Մենք այստեղ մտադիր չենք մանրամասնօրէն առաջ բերել Նոբէլի արած բոլոր յառաջադիմութիւնները նաւթային արդիւնաբերութեան մէջ, այդ պատճառով էլ վերև բերած տեղեկութիւնները պէտք է չափազանց կրճատած համարել, որովհետև եթէ սկսենք մի առ մի թւել այն ամենը, ինչ որ արել է և անում է այժմ